**ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ**
**ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**



Ծնվել է 1898թ., Թիֆլիսում: Սովորել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում (1911- 1915), ապա՝ Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանում (1913-1917):
1917թ. որպես ուսանող զորակոչվել է և ուղարկվել Նիժնի Նովգորոդի ուսանողական գումարտակ: Աշխատանքային գործունեությունն սկսել է Ռուսաստանի բանգյուղտեսչության լիազորությունում՝ որպես տեսուչ:
1921թ. տեղափոխվել է Հայաստան և աշխատել Լոռի-Փամբակի գավհեղկոմի, ապա գավգործկոմի նախագահ, ապա՝ ՀԽՍՀ ֆինանսների ժողկոմի տեղակալ (1919-1928):
1928թ. նշանակվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:
Վ. Մամիկոնյանը եղել է նաև ՀԽՍՀ հողժողկոմի տեղակալ (1919-1931), Հայկոոպի նախագահ (1929-1931), Անդրֆեդերացիայի հողժողկոմի տեղակալ (1932-1933), ֆեդերացիայի մատակարարման ժողկոմ (1933-1934), ՀԽՍՀ հողժողկոմ (1934-1936), ՀԽՍՀ Պետբանկի կառավարիչ (1936-1937):
1937թ. ՀԽՍՀ Գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի դատավճռով դատապարտվել է գնդակահարության:
1988 թվականին արդարացվել է: